

որդոց մարդկան: 14 Դու, Տեր, սրտագետ յամենայնի, դու գիտես զճմարտութեան զվաստակոց զառնս զայսորիկ, զի խստամբերութեամբ վարի ի վարս վաստակոց իւրոց, եւ չիք հաւատք ի սմա. արդ յաւել ի սա հաւատս քան զհատ մանանխոյ, զի մի՛ կորիցէ անձն սորա: 15 Զովիւ քաջ, որ ելերդ ի խնդիր ոչխարին կորուսելոյ, եւ եղիր զանձն քո ի վերայ խաշանց քոց, արդ եւ զսա փրկեա ի թերահաւատութենէ՝ յոր ըմբռնեալս է, զի մի՛ յափշտակեցէ թշնամին զանձն սորա, եւ քո ստեղծուածս եւ նմանութիւն կերպարանացս յապականութիւն յափտենական կորստեան մատնեսցի:

16 Եւ զայս աղաւթս մատուցաներ էրեցն յառաջ քան զմատուցանելն պատարագին, եւ յետ այսորիկ մատոյց կատարեաց զպատարագամատոյցն զամենայն: 17 Իբրեւ ասաց՝ Զայր մեր որ յերկինս, եղ ծուր եւ կայր յաղաւթս յերկար: 18 Եւ մինչ դեռ եղեալ էր նորա ծուր եւ կայր յաղաւթս, եւ կայր եղբայրն թերահաւատ ի յոտն, ի խոնարհ ի բեմէն նայր ի սեղանն, սկսաւ տեսանել մեծամեծ սքանչելիս աչաւք բացաւք իւրովք: 19 Զանզի տեսաներ զՔրիստոս, զի իջեալ կայր ի վերայ սեղանոյն. եւ բացեալ էր իւր զվերսն ի կողմանէ, զոր ի կողմն գեղարդեամբն խոցեցին. եւ ի վիրէ կողիցն արիւնն ցնցղկացեալ հոսեր ի բաժակ անդր պատարագին, որ եղեալ էր ի վերայ սեղանոյն: 20 Իսկ իբրեւ տես զայս եղբայրն թերահաւատ կրանաւորն, զարհուրեալ դողացեալ խռովեալ տագնապեալ յերկիր կործանեալ կայր, ի բերանս հարեալ, պարտեալ թալացեալ ոգին սպառեալ յինքենէ:

21 Ապա երեցն յարուցեալ կատարեաց զգործ սրբութեան պատարագին. իջուցեալ զսրբութիւն արիւնացն ի բեմբէն, տես զեղբայրն, զի յերկիր կործանեալ թալացեալ կայր: 22 Իբր ետ ում տալ էր զաւրէնսն, եւ եհան զմնացորդսն ի սեղանն, ապա ինքն մատուցեալ բուռն հարկաներ զեղբարեն. եւ տեսաներ, զի նա թալացեալ պակուցեալ կայր ի գետնին: 23 Ապա ջուր արկաներ ընդ բերանան¹. իսկ նա ուրեմն եբեր զոգի. եւ զգաստացեալ, մատեաւ եկաց պատմեաց զմեծամեծ սքանչելիսն՝ զոր ինչ տեսն: 24 Ապա կամեցաւ տալ նմա երեցն ի սրբութենէն անտի արիւնացն. իսկ եղբայրն չհաւանեալ չառնոյր յանձն, վասն զի անարժան համարեր զանձն իւր: 25 Այլ հոր հատեալ անձինն, ի ներքս իջեալ, զելթն ամ ապաշխարեալ զթերահաւատութիւն մեղաց իւրոց, եւ յետ ելթն ամին ապա զանձն արժանի ապաշխարութեան համարեր, ելանել առնուլ ընդ արւեմնս հաւասարել: 26 Սակայն ի նոյն հոր իջուցեալ զանձն իւր զամենայն աւուրս կենաց իւրոց, մինչեւ ի նմին հոր վաղճանեցաւ եղբայրն: 27 Ապա եւ նոյն երեցն հանգեաւ, եւ ի միասին երկոքին եղան ի ներքս ի վկայանոցին, ուր սքանչելիք երեւեցան յեղբայրանոցին Եպիփանու:

1 *Յօրինակի միում* ընդ բերան առն